

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 200-Ա

20 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1818-Ա, N 1820-Ա, N 1822-Ա, N 1825-Ա, N 1827-Ա, N 1833-Ա, N 1838-Ա և N 1841-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 16-17-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Տիգրան Մխիթարյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Ազատամարտիկների 89.
- 2) «Մեխակ Կիրակոսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Էրեբունի 128/1.
- 3) «Հասմիկ Կիրակոսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Էրեբունի թաղամաս, 25/78.
- 4) «Իմմունֆարմ» ՍՊԸ՝ ք. Երևան, Էրեբունի 28 շենք, 52 տարածք.
- 5) «Արթուր Հունանյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 22 փողոց 21/5.
- 6) «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ՝ ք. Սիսիան, Նժդեհի 17.
- 7) «Արաքսյա Ալոյան Հովհաննեսի» Ա/Ձ՝ Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Խորենացի 10/3.
- 8) «Արմեն Հակոբյան Մարտունի» Ա/Ձ՝ Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Գրիգոր Լուսավորիչի 54/54.
- 9) «Գենրիխ Կյուրեղյան» նյարդաբանական կենտրոն ՍՊԸ՝ Շիրակի մարզ, Գյումրի համայնք, Վ. Սարգսյան 30/3:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 20/07/20 16:28:22 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ